



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » փետրվարի 2018 թ.

N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթեյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-242-24.01.2018-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 90 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունների նախագծի մասին

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-242-24.01.2018-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունների նախագծին և այն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմ:

Դ.

Հարությունյան

Ամալյա Ենգոյան ----- ,, ,, փետրվարի 2018 թ.

Սեդրակ Բարսեղյան ----- ,, ,, փետրվարի 2018 թ..

Հովակիմ Հովակիմյան _____ ,, ,, փետրվարի 2018 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-242-24.01.2018-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվող փոփոխությամբ ստացվում է, որ քրեական գործով վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշման պատճենը քննիչի կողմից տրամադրվում է ինչպես տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, այնպես էլ նրանց ներկայացուցիչներին: Այս առումով, հարկ է նշել, որ թե՛ Օրենսգիրքը, թե՛ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը քննարկման առարկա հարաբերությունները կարգավորելիս արդարացիորեն սահմանում են հնարավորություն՝ տեղեկացնել կամ տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ վերջիններիս ներկայացուցիչներին, այլ ոչ թե՛ հիշյալ բոլոր սուբյեկտներին միաժամանակ: Հարկ է նշել, որ նախագծին կից ներկայացված հիմնավորումը ևս հնարավորություն չի տալիս գնահատելու առաջարկվող կարգավորման հիմնավորվածությունը և նպատակահարմարությունը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի առաջարկվող խմբագրության մեջ «և» շաղկապը փոխարինել «կամ» շաղկապով:

Բացի դա նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող փոփոխությամբ առաջարկվում է Օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերով նախատեսված դեպքերում, այն է՝ քրեական գործով վարույթի կասեցման հետևյալ հիմքերի դեպքում ևս՝ մեղադրյալը ծանր հիվանդ է կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, որոնց պատճառով չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե առանց նրա մասնակցության քրեական գործով հետագա վարույթն անհնար է, ինչպես նաև գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին, մեղադրյալին և նրա պաշտպանին ուղարկել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը: Այս առումով, պարզ չէ, թե՛ ինչու է

Նախագիծը սահմանափակվել քրեական գործով վարույթի կասեցման բացառապես հիշյալ երկու հիմքերը նախատեսելով՝ չանդրադառնալով Օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ մեղադրյալը կամ այն անձը, որին գործով որպես մեղադրյալ ներգրավելու բավարար հիմքեր կան, օգտվում է քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից, հիմքին: Հարկ է նշել, որ նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ ևս ներկայացված չեն անհրաժեշտ տեղեկություններ նախագծով առաջարկվող կարգավորման հիմնավորվածության և այլընտրանքային տարբերակներից հենց նախագծով առաջարկվող տարբերակն ընտրելու նպատակահարմարության վերաբերյալ:

Միաժամանակ, նախագծի քննարկվող դրույթում «մասերով» բառն անհրաժեշտ է փոխարինել «կետերով» բառով՝ ելնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներից:

Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող կարգավորումից պարզ չէ՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը ուղարկելու պահը, հետևաբար առաջարկում ենք նախագծում հստակեցնել այն՝ սահմանելով քննիչի կողմից հիշյալ որոշման պատճենն ուղարկելու որոշակի ժամանակային սահման: Տեղեկացնենք, որ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծն այս առումով կիրառել է «անհապաղ» եզրույթը:

Բացի այդ, առաջարկում ենք նախագծի հիշյալ դրույթում «բողոքարկման կարգը» բառերից հետո լրացնել «և ժամկետները» բառերը:

Վերոնշյալ առաջարկները վերաբերում են նաև նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետով առաջարկվող կարգավորմանը:

Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետով առաջարկվող կարգավորման մեջ «ֆիզիկական անձի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ֆիզիկական անձին» բառերով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական վարույթի շրջանակներում անձը կարող է հանդես գալ ներկայացուցչի միջոցով դատավարական որևէ կարգավիճակ ստանալուց հետո միայն:

Եզրակացություն
«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում
փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում
կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱԶԳԻՔ. 6/246-18
23.01.18թ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարչապետ

Ձեզ եմ ուղարկում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Կարինե Աճեմյանի, Ալիկ Սարգսյանի, Ռուզաննա Մուրադյանի, Ռաֆիկ Գրիգորյանի, Հակոբ Բեգլարյանի և Ֆելիքս Յուլակյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-242-24.01.2018-ՊԻՄԻ-011/0):

ԱՐԱ ԲԱԲԼՈՅԱՆ

2018թ. հունվարի 24



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 258-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Քննիչը տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին եւ նրանց ներկայացուցիչներին, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ եւ 5-րդ մասերով նախատեսված դեպքերում՝ մեղադրյալին եւ նրա պաշտպանին ուղարկում է քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը՝ պարզաբանելով որոշման բողոքարկման կարգը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 262-րդ հոդվածում.

1) առաջին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Քննիչը կասկածյալին, մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաեւ տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին, ինչպես նաեւ այն ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչին, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, ուղարկում է քրեական գործով վարույթը կարճելու եւ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենը՝ պարզաբանելով գործի նյութերի հետ ծանոթանալու նրանց իրավունքը եւ որոշման բողոքարկման կարգը:»:

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

Նախագծի ընդունումը պայմանավորված է տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի եւ նրանց ներկայացուցիչների շահերն արդյունավետ պաշտպանելու անհրաժեշտությամբ:

Գործող քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 258-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննիչը պարտավոր է շահագրգիռ անձանց գրավոր տեղեկացնել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին եւ միաժամանակ պարզաբանել, որ քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշումը կարող է բողոքարկվել նույն օրենսգրքով նախատեսված կարգով:

Նշված նորմերի մեկնաբանությունը («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածով սահմանված նորմերի մեկնաբանման մեթոդով) թույլ է տալիս եզրակացնել, որ քննիչը զուտ տեղեկացնում է որոշման մասին: Այսինքն, շահագրգիռ անձիք, տեղեկանալով կասեցված վարույթի մասին, չեն ստանում որոշման պատճենը, այլ վերջիններիս ուղղակի բացատրում են դրա բողոքարկման հնարավորության մասին:

Պրակտիկայում քննիչների կողմից վերոնշյալ որոշումների միայն տեղեկացման եւ դրանց բողոքարկման կարգի պարզաբանման, ինչպես նաեւ արդյունքում փաստացի որոշման պատճենի չտրամադրման հիմնավորում է հանդիսանում այն, որ Օրենսգրքով նման դատավարական կարգ սահմանված չէ:

Մինչդեռ, հարց է առաջանում, թե Օրենսգրքի վերոնշյալ հոդվածում նշված շահագրգիռ անձիք քննիչի կողմից քրեական գործով վարույթը կասեցնելու վերաբերյալ ո՞ր հիմքերը կարող են բողոքարկել համապատասխան մարմին, եթե քննիչն ընդամենը գրավոր տեղեկացնում է քրեական գործով վարույթը կասեցնելու մասին՝ չնշելով այդ որոշումը կայացնելու հիմքերը: Նշվածն ուղղակի հակասության մեջ է գտնվում Օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի հետ, որի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց իրավունք է տրվում դատարան բողոքարկել նաեւ քրեական գործը կասեցնելու մասին որոշումը:

Իրականացնելով քննարկվող ինստիտուտի համեմատական վերլուծություն Օրենսգրքի այլ դրույթների ու կարգավորումների միջեւ եւ համեմատելով խնդրո առարկա կարգավորումը քրեական գործով վարույթի կարճման ինստիտուտի հետ (Օրենսգրքի 262-րդ հոդված), պարզ է դառնում, որ այնտեղ կարգավորումն ընթացել է այլ ճանապարհով, մասնավորապես՝ տուժողին ուղարկվում է կարճման որոշման պատճենը՝ դրանով իսկ նախատեսելով բոլոր իրական հնարավորությունները նշված որոշումը բողոքարկելու համար:

Հարկավոր է հաշվի առնել, որ քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշումն ուղղակիորեն վերաբերում է տուժողի շահերին, եւ հաշվի առնելով այն, որ անձանց արդյունավետ պաշտպանության իրավունքի իրականացման համար միջոցների նախատեսումն ու մատչելիության ապահովումը պետության պոզիտիվ պարտականությունն է, տրամաբանական կլիներ, որ քննիչը տուժողին տրամադրեր քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշման պատճենը եւ պարզաբաներ, որ նշված որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությունից հետո, նկատի ունենալով, որ տուժողները, չստանալով որոշումները, փաստորեն զրկվում են դրանք բողոքարկելու, այդ կերպ իրենց շահերն արդյունավետ պաշտպանելու հնարավորությունից, Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման միասնական պրակտիկական ապահովելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազը դեռեւս 2013թ. հուլիսի 17-ին հանձնարարել է կառուցվածքային եւ տարածքային ստորաբաժանումները ղեկավարող դատախազներին՝ ապահովել տուժողին, նրա ներկայացուցիչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին քրեական գործով վարույթը կասեցնելու մասին գրավոր իրազեկումը, որում

միաժամանակ պետք է պարզաբանվի, որ վերոնշյալ անձանց կողմից գրավոր պահանջի դեպքում նրանց կարող է տրամադրվել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը՝ այն Օրենսգրքով նախատեսված կարգով բողոքարկելու համար:

Հանձնարարականն, իհարկե, ողջունելի է եւ իրականում լուրջ ձեռքբերում է իրավահարաբերության կարգավորման շրջանակներում, այնուամենայնիվ, անհրաժեշտ է, որ հարցը կարգավորվի օրենքով, քանի որ այն հավասարապես վերաբերում է իրավունքին ու պարտականությանը, իսկ ՀՀ Սահմանադրության համաձայն ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Օրենսգրքի 262-րդ հոդվածում փոփոխություններ կատարելը զուտ խմբագրական բնույթ է կրում եւ նոր խմբագրությամբ շարադրելու առաջարկությունը բխում է 258-րդ հոդվածում կատարվելիք փոփոխության հետ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 փետրվարի 2018 թվականի N 90 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արտակ Ասատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-242-24.01.2018-ՊԻՄԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2018 թ. փետրվարի 7
Երևան



Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ